

«ՊԱՒՂՈՍ»

(Կենսագրության մի փորձ)

Գոշավանքի Ս. Գրիգոր եկեղեցու հարավային մուտքի ձախ կողմում զետեղված է հոյակապ, անզուգական մի խաչքար, որի ձախակողմյան աստղաձև եզերազարդերից վերջինի մեջ նշված է կերտողի անունը՝ «Պաւոս»:

Բայց ո՞վ է եղել այդ հանճարեղ, բայց ծայր աստիճան համեստ արվեստագետը: Դժբախտաբար կենսագրական ոչ մի տեղեկություն չի հասել մեզ:

Հայտնի են միայն նրա երկու ստեղծագործությունները ևս: Նախ այն, որ ժամանակին զետեղված է եղել վերոհիշյալ եկեղեցու մուտքի աջ կողմում, նույն մեծությամբ և մոտավորապես նույնպիսի շքեղ հորինվածքով, որ սակայն, բարբարոսական արշավանքներից մեկի ժամանակ տապալել են գետին, մեջտեղից ջարդված՝ խրվել է հողի մեջ ու մնացել է այդ վիճակում դարերով:

Կարծեք նահատակյալ այդ խաչքարն էլ հարություն առնելու համար սպասում էր մեր ներկա Հայաստանի վերածննդյան: Արդարև, շուրջ քառասուն տարի առաջ վաստակաշատ հնագետ Սեդրակ Բարխուդարյանը հայտնաբերում է այն ու փոխադրում Երևան, Պատմության Պետական թանգարան:

Երրորդը նա հորինել է իբրև գերեզմանային սովորական մի խաչքար, որը կանգնեցրել է Գոշավանքի Ս. Նշան եկեղեցու մուտքի արևմտյան կողմում, իր և Հովհաննես եղբոր անունից, ի հիշատակ իրենց ծնողաց, ինչպես արձանագրված է պատվանդանի վրա, այժմ շատ եղծված վիճակում՝ «...ոգոյն հարազատ եղբարք Պաւղոս և Յովհաննէս երկուորեակ ընծաքս ասծելոյն Յիսուսի, ծնողաց մերոց, որ երկրպագէք...ի թւ...»:

ԺԳ դարը, որ մեր ճարտարապետության և արվեստների նոր մի վերածննդյան ժամանակաշրջանն է համարվում, նրա՝ Պաւղոսի նման անզուգական մի արվեստագետի այսպես անհայտ մնալու պարագան ինձ միշտ անհանգստացրել է, ու ամեն անգամ, որ դիտում եմ գրասեղանիս դիմաց զետեղված նրա հոյակապ խաչքարի մեծադիր լուսանկարը, կարծում եմ տեսնել մեծ վարպետի հանդիմանական ակնարկը...

Սակայն, եթե անհայտ են նրա կենսագրության ինչ-ինչ մասերը, մտածում եմ հաճախ, մի՞թե նրա գործերը պերճախոս վկաները չեն նրա կյանքի և ստեղծագործական ամենաբարդ և խորը ապրումների:

Ուստի, ահա նրանք թելադրում են ինձ, և ես փորձում եմ գրի առնել:

ԺԳ դարի վերջին քառորդում էր:

Պաւղոսը նույն դարի հետ հասակ առած, նոր էր ավարտել Գոշավանքի Ս. Գեորգ եկեղեցու մուտքի աջ կողմում զետեղվելիք խաչքարը: Վանքի միաբանությունը խաչքարի հանդիսավոր օծումը կատարելու համար հրավիրել էր Վայոց ձորի Նորավանքի վանահայր, նշանավոր պատմագիր, բանաստեղծ Ստեփանոս եպ. Օրբելյանին:

Վարագա Ս. Խաչի տոնն էր, կիրակի, 28 սեպտեմբերի:

Սյունիքի եկեղեցական և աշխարհական մեծամեծները հավաքվել էին Գոշավանքում և արտատրոփ սպասում էին Նորավանքի պատկառելի վանահորը: Կեսօրին նա ժամանեց իր ձիավոր շքախմբով: Երկար ճանապարհորդությունից հոգնած, նրանք մի

---

[1] Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1968, էջ 146:

պահ հանգստացան: Երեկոյան ժամերգության ավարտից հետո տեղի ունեցավ խաչարձանի ևվիրագործման հանդիսավոր արարողությունը: Երբ մի կողմ առան ծածկող սավանը, ամեն ոք մի պահ մնաց հիացումից բերանաբաց: Շատերը խաչակնքում էին և օրհնանքի բառեր էին մրմնջում: Լսվեց Ստեփանոս եպիսկոպոսի բամբ ձայնը.

«...Խաչքարերը,—ասաց նա,—բազմադարյան մեր հավատքի, մեր ինքնուրույն արվեստի կոթողներն են, որոնք խորհրդանշում են մեր ժողովրդի մաճացու դարավոր փորձություններից միշտ էլ հարություն առնելու անսասան հավատքը, նույնիսկ երաշխիքը...»:

Քարոզից հետո Սրբազանն իր մոտ հրավիրեց Պաւղոսին: Նա եկավ, խոնարհաբար ծնրադրեց նրա առջև: Սրբազանը օրհնեց, արևշատություն մաղթեց, որպեսզի մուտքի դռան ձախակողմում զետեղվելիք խաչքարը ևս կերտելու բազմաշխատ գործը գլուխ բերի: Ներկա գտնվող մեծամեծները ևս շնորհավորեցին մեծ «վարդպետին»: Ներկա էր նաև Նորավանքի համբավավոր «վարդպետ» Մոմիկը՝ հիանալի մանրանկարիչ, ճարտարապետ և նույնպես խաչքարեր հորինող, որ խանդավառությամբ եկավ, ջերմորեն ողջագուրվեց Պաւղոսի հետ, երկար կյանք մաղթեց նրան «որպեսզի,—ասաց,—այսպիսի վեհապանծ ստեղծագործություններով փառավորվի մեր արվեստը»:

Մոմիկը հատկապես իր հիացումը հայտնեց մեծ վարպետի այն նորարարության համար, որով նա զարմանալի համբերությամբ շղարշանմամբ մի ցանցով պարուրել էր և՛ ևվիրական խորհրդանշանները, և՛ զարդաքանդակները բոլոր, որով մոռացվում է քարի նյութեղեն հանգամանքը, վերածվելով մի հոգեզմայլ գեղեցկության, մի հավերժացած շարականի:

Սակավախոս Պաւղոսի դեմքը պայծառացավ. փաթաթվեց իր մեծ արվեստակցին ու ժպտագին ասաց.

— Սիրելի Մոմիկ վարդպետ, ահա դու ես միայն ինձ լիովին ըմբռնում. ես վարձատրված եմ զգում: Շնորհակալ եմ:

Մոմիկը առիթից օգտվեց.

— Սիրելի վարդպետ, ես այնքան խանդավառված եմ Ձեր նորարարությամբ, որ պիտի խնդրեի Ձեր հաճությունը, որպեսզի այսուհետև ես էլ այն կիրառեմ իմ խաչքարերում:

— Ամենայն սիրով, սիրելիդ իմ արվեստակից,—ասաց Պաւղոսը,—ես ահա կյանքիս վերջալույսն եմ ապրում, իսկ քո արևը զենիթ է բարձրանում... Ի սրտե հաջողություն եմ ցանկանում:

Մոմիկը, հետո դառնալով վանահոր կողմը, ասաց.

— Սրբազան հայր, այս հրաշակերտ խաչքարին պակասում է սակայն մի կարևոր բան...

Ամեն ոք զարմացած նրան նայեց. սրբազանը խոժոռվեց:

— Այո, ասաց,—պակասում է կերտող մեծ վարդպետի անվան հիշատակությունը:

— Արդարև արժանի է,—ասաց սրբազանը,—թող համեստության դեմ մեղանչում չհամարվի անհուշտ նրա բարեգործ տանուտերի ողորմածության հիշատակությունից հետո:

Պաւղոսի հոգին փոթորկվեց. սակայն ինքնազուսպ ու լռիկ, մնաց գլխիկոր:

* * *

Երբ վերջացան պաշտոնական հանդիսությունները, Պաւղոսը քաշվեց իր արվեստանոցը և խորասուզվեց մտքերի մեջ: Այսպես, Մոմիկի առաջարկը համարեց արվեստակցի ազնիվ մի վերաբերմունք՝ ի պաշտպանություն հեղինակային իրավունքի: Սակայն սրբազանը արժանի համարելով հանդերձ, պայմանադրել էր «բարեգործ» տանուտերերի «ողորմածության» հիշատակումից հետո...: Ոչ: Ինքը թեև ընկարագրով համեստ է, սակայն իրեն խորթ էր թվում արվեստագետի իր աստվածատուր ձիրքը ստորադասել մի բոի ավատապետի փառասիրությանը: Ո՛չ:

— Տեր աստված,—բացականչեց նա,— ե՞րբ պիտի ազատագրվի միտքը նյութականի գերիշխանությունից:

Բացի այդ պարագայից, այժմ ինքն այնքան էլ գոհունակությամբ չէր դիտում ընիրագործված իր այդ խաչքարը, բաղդատելով հորինվելիք նորի գծագրերին: Այն ժամանակ խանդավառված համատարած ցանցակերպ հյուսքի իր նորարարությամբ, չէր անդրադարձել ինչ-ինչ տկար կետերին: Օրինակ, վարդյակի, այսինքն՝ «Կենաց հացը» խորհրդանշող սկավառակաձև զարդաքանդակի հյուսքը շատ միապաղաղ էր ստացվել. իսկ խաչանշանի բունը ընդգրկող խաչքուրը և վերևի խաղողի զույգ ողկույզները ծայրահեղ ոճավորման պատճառով գրեթե անշքացել, անճանաչելի էին դարձել, և այլն: Այո, ընդհանուր առումով գեղեցիկ էր, սակայն, «ի ծագել արեգական, կորնչին աստեղք», մրմնջեց ու նորից իր առջև տարածեց նորի մագաղաթյա մեծածավալ նախագիծը, ու անհուն գոհունակությամբ սկսեց դիտել այն, ուր ամեն ինչ կատարյալ ձևակերպված էր, ամեն ինչ ինքնատիպ հյուսք ուներ ներքուստ, սակայն արտաքնապես նման՝ դիմացի զույգին: Մանավանդ ընդիրական խորհրդանշանները այնքան կարկառուն էին, որ խաչքարը վերածում էին հարության խորհրդանիշի:

— Այո, այո,—կրկնում էր իր մտքում,—իմ բովանդակ կյանքի փորձառության համագումարն է սա և լինելու է իմ գլուխ գործոցը...

Այդ մտքերով տարված քայլերն ուղղեց դեպի մեծ լուսամուտի առջև հորիզոնական դիրքով զետեղված հսկա որձաքարը, մակերեսը մաքուր հղկված, պատրաստ՝ գրոցի առաջին հարվածն ընդունելու...

Հանկարծ մի սև տարակույս սողոսկեց իր մտքում:

Զարհուրած, կանգ առավ, ձեռքը ճակատին: Իր գանգում արձագանքում էր խռովիչ մի ձայն:

— Պաւղոս, Պաւղոս, հեշտ էր գծագրեր պատրաստել մագաղաթի վրա և դիտել, հիանալ... Սակայն մտածե՞լ ես, թե դրանք քանդակելու ես այդ ամենակարծր ապառաժի վրա, տարածելով նրանում քո նախատեսած այդ երեք տարբեր խորությունների մակերեսների վրա, անշփոթ ու համապատասխան կարկառներով...

— Պաւղոս, Պաւղոս, մտածե՞լ ես, թե քո շաղափող գործիքը, կամ ամենանուրբ գրոցը, որքան էլ լավ հեսանված լինեն, պիտի կարենա՞ն անսայթաք գործել այդքան նուրբ բազիղներում, այդ քո այլևս զառամյալ, կոշտացած մատների մեջ...

— Պաւղոս, Պաւղոս, հապա եթե քո ստեղծած շղարշանման ցանցի քարեղեն թելերից մեկն ու մեկը պոկվի՞... եթե խաչի կենտրոնից մեկնող և ընդիրական խորհրդանշաններին միացնող նշանակալից կապը բեկվի՞, խորտակվի՞, ինչ անդարմանելի աղետ պիտի լինի: Փորձության մի ենթարկիր տարիների քո անհեղի աշխատանքը, մանավանդ քո այս առաջացյալ տարիքում: Վայելիր քո վաստակած փառքը... Հրաժարվիր այս քո արկածախնդրությունից...

Հանկարծ գլխապտույտ զգաց. ջլատված նստեց քարին, մատները գլխի սպիտակած գանգուրների մեջ խրած:

Չիմացավ, թե որքան էր մնացել այդ վիճակում: Զգում էր, սակայն, որ հետզհետե պայծառանում էր իր միտքը: Ընդոստ ոտքի ելավ ու աղաղակեց.

— Սատանի էր այդ, Սատանի անիծյալ փորձությո՞ւնը... ես կյանքում միշտ բարձրագույնին եմ ձգտել, ես միշտ հավատք եմ ունեցել իմ կյանքի բոլոր ձեռնարկներում, որովհետև «հավատքը լեռներ կարող է շարժել», ասված է, և ես հավատում եմ, որ իմ այս վերջին հոյակապ ձեռնարկն էլ պիտի կարողանամ ի կատար ածել:

Պաւղոսը խաչակնքեց դեմքը, մի աղոթք մրմնջելով: Դրանով մի տեսակ զորակոչի էր ենթարկում հոգեկան իր բոլոր ուժերը: Ձեռքն առավ շաղափող գործիքը և առաջինը պեղեց սկավառակի կենտրոնում նախատեսված այն փոսիկը, ուր մահանալու էր ըստ Ավետարանի «Հատն ցորենո», հետո հարություն առնելու համար «Կենաց հաց» խորհրդանշող սկավառակում: Ու այնուհետև նա շարունակելու էր տարիներ ու տարիներ տևելիք ծայրահեղ ուշադրություն, համբերություն պահանջող մանրակերտ այդ աշխատանքը:

Իսկ ի գին այդ բոլորի, ի՞նչ էր ունենալու. թշվառական մի մահարձա՞ն, ինչպես

ընդունված է բովանդակ քրիստոնյա աշխարհում... Ո՛չ. ոչ՝ «Հայկականը», պատասխանեց իր իսկ հարցումին:

Պաւղոսը գիտեր, որ խաչքարեր կերտող հայ վարպետները աճա մի հազարամյակից ի վեր, առավել կամ նվազ հաջողությամբ խաչքարեր են հորինել, հավատարմորեն պահպանելով ավանդական այն խորհրդանշանները, որոնք հարության խորհուրդն են պատկերացնում:

Ինքն ուրեմն ընթանում էր նույն ճանապարհով:

Գուցե տասնյակ տարիներ էին անցել: Պաւղոսը վերջապես ավարտել էր իր հրաշագեղ խաչարձանը: Մի կողմ հավաքելով մուրճը, շաղափող գործիքը, պողպատյա զանազան տեսակի գրոցները, դուրերը, վերջին անգամ մի պահ կանգնեց իր ձեռակերտի դիմաց, դիտեց, դիտե՜ց այն անհուն գոհունակությամբ, մինչ աչքերից կայլակում էին անպատմելի մի երջանկության արցունքները...

Արվեստանոցից դուրս գալու պահին ուժասպառ էր զգում: Հանկարծ հիշեց, որ վերջին մի պարտականություն էլ ուներ կատարելիք: Խաչքարի ձախակողմյան եզերազարդի վարի մեդալիոնի մեջ թողել էր մի փոքր դատարկ անկյուն: Կրկին վերցրեց մուրճն ու գրոցը և դանդաղորեն քանդակեց՝ «Պաւ+Ղոս»:

Հազիվ ավարտած, հանկարծ աչքերը մթնեցին ու գետին փովեց անշնչացած:

Պաւղոսը անմահացած էր...

ԱՌԱՔԵԼ Ն. ՊԱՏՐԻԿ